Հառիճ

Վարչական ղեկավար՝ Ռոլանդ Նազարեթյան

Հեռ: 055 01 33 00

Մակերես՝ 12.5կմ²

Բնակչություն՝ 1140

Ինդեքս՝ 3014

harich.gp@mail.ru

Հառիճը գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկ համայնքի վարչական շրջան է,Արթիկից գտնվում է 4,8 կմ հեռավորության վրա, իսկ մարզկենտրոնից՝ 22 կմ հարավ-արևելք, Արագածի արևմտյան լանջին: Նախնիները գաղթել են Բասենից, Բաբերդից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի վարդագույն, սև և կարմիր տուֆի պաշարներ, շինարարական ավազ:Գյուղի հվ. գտնվում է բրոնզեդարյան բնակատեղի (մ.թ.ա. 3-րդ հզմ.- մ.թ. 10դ.), միջնադարյան Հառիճի վանքը (VII-XIII դարեր), Սբ. Հարություն (1116 թ.), սբ. Գևորգ (VII դ.), սբ. Աստվածածին (XIII դար) եկեղեցիները, <<Շիրիմներ>> (VII-VIII դարեր) և <<Ճգնավոր>> (4 դար) մատուռները: Գյուղի հարավային կողմում, երեք դարավանդների վրա, գտնվում է 12 հա ընդհանուր մակերեսով բրոնզեդարյան բնակատեղի: Հնագիտական ուսումնասիրություններն սկսվել են 1966-ին: Հուշարձանը բազմաշերտ է, պարունակում է մ.թ.ա. III հազարամյակից մինչև մ.թ. X դարը շերտեր: Վաղ բրոնզեդարյան շերտում բացվել են քառանկյուն հիմքերով բնակարաններ՝ քարաշեն կրակարաններով: Հայտնաբերվել են աշխատանքային գործիքներ, խեցեղեն, պերճանքի առարկաներ: Բնակատեղիի մոտ գտնվում է դամբարանադաշտը՝ մոտ 3 քկմ

տարածքով: Դամբարանախցերում հաճախ գտնված ածխի ու մոխրի մնացորդներից ենթադրվում է, որ Հառիճում ընդունված է եղել դամբարանը չար ոգիներից մաքրազերծելու արարողությունը: Գտնվել են նաև կենդանիների կավե գեղեցիկ արձանիկներ: Ուշագրավ է Հառիճում բացված տաճարային համալիրը: Վաղ միջնադարյան և հետագայի շերտերից հայտնաբերված նյութերը (խեցեղեն, երկաթե և ապակե իրեր, դրամներ ևն) վկայում են, որ կյանքն ամրոցում գոյատևել է մինչև Հառիճի եկեղեցու կառուցումը: Այնուհետև բնակիչները հաստատվել են այժմյան Հառիճի գյուղի տարածքում: https://hushardzan.am/archives/26174 https://hushardzan.am/archives/142